

# ՀԱՅՐ Ս. ԻՍԱԽԱՆՅԱՆ՝ ԳԵՐՄԱՆԱԶԱՅԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Posted on May 8, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



Համօ Մոսկօֆեան, Հանաու-Գերմանիա, 1 Մայիս 2011

**✘ Հայր Սերովբէ Իսախանեան  
Գերմանիոյ Հայոց Առաջնորդական փոխանորդ  
Հեսլն նահանգի Հայ Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւոր Առաջնորդ**

**Հարցում.**- Կ'ապրիք ու կը գործէք եկեղեցական թէ ազգային կարեւոր իրադարձութիւններով լի ժամանակներ՝ հաւատքի թէ ազգային ինքնագիտակցութեան, դաւանափոխ հայերու վերադարձին եւ այլ կարեւոր մարտահրաւերներու դեմ-յանդիման: Այս կապակցութեամբ ի՞նչ կը հաղորդէք մեր ընթերցողներուն:

Համօ Մոսկօֆեան, Հանաու-Գերմանիա, 1 Մայիս 2011

**✘ Հայր Սերովբէ Իսախանեան  
Գերմանիոյ Հայոց Առաջնորդական փոխանորդ  
Հեսլն նահանգի Հայ Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւոր Առաջնորդ**

**Հարցում.**- Կ'ապրիք ու կը գործէք եկեղեցական թէ ազգային կարեւոր իրադարձութիւններով լի ժամանակներ՝ հաւատքի թէ ազգային ինքնագիտակցութեան, դաւանափոխ հայերու վերադարձին եւ այլ կարեւոր մարտահրաւերներու դեմ-յանդիման: Այս կապակցութեամբ ի՞նչ կը հաղորդէք մեր ընթերցողներուն:

**Պատասխան.**- Բնականաբար եկեղեցւոյ հիմնական գործունեութիւնը իր ժողովուրդին հոգեւոր սպասարկումն է: Բնականօրէն վերջին ամիսներուն, իմ աշխատանքներս կը շարունակեմ Գերմանիոյ հայ գաղութին մէջ: Այն իր հարցերով, մարտահրաւերներով կը նմանի Սփիւռքեան ուրիշ հայ գաղութներու: Մեր հիմնական խնդիրներէն նաեւ, որ մեր հայրենակիցները շատ ցրուած կ'ապրին Գերմանիոյ հսկայական տարածքին վրայ: Այս երկրի հայութեան զանգուածային ներգաղթը սկսաւ վերջին 50 տարիներուն: Ով ուր որ գործ գտաւ, այնտեղ հաստատուեցաւ, որուն հետեւանքով մենք ցրուած ենք եւ այդ է մեր գլխաւոր դժուարութիւններէն մէկը մեր համայնքային գործունեութեան մէջ: Օրինակ՝ իմ պաշտօնավարած տարածքս երկու Հայաստանի չափ է: Մենք, հոգեւորականներս այս տարածքին մէջ ամէն բան չենք կրնար ընել: Վերջերս արհեստավարժ խմբավար մը հրաւիրեցինք աշխատանքի, որ երաժշտական կրթութիւնը Հայաստանի մէջ ստացած է, որպէսզի երգչախումբեր կազմակերպէ՝ 3 համայնքներու մէջ երաժշտական թէ աշխարհիկ երգեր սորվեցնելով: Մեր պատանիները ոչ միայն հայերէն դասընթացքներու կը հետեւին, այլեւ երգի ու երաժշտութեան, որ մեր հայկականութիւնը կ'արտացոլէ: Կը մտածենք նաեւ

թատերական խումբ մըն ալ ստեղծել՝ երիտասարդութիւնը աւելի կապելու հայ եկեղեցիին եւ հայկական ինքնութեան: Գերմանիոյ մէջ այսօր հայկական աշխոյժ ազգային կեանք շատ քիչ կայ: Ամէն դրական միջոց պետք է կիրարկել կապուելու հայ երիտասարդին եւ բացատրելու եւ ըմբռնել տալու թէ ինչո՞ւ կարելոր է կապուած մնալ հայութեան, եկեղեցիին, մշակոյթին...:

Այս բոլորէն դուրս, որուն մասին անդրադարձած ենք բազմիցս, դաւանափոխ հայերու հետ մեր հանդիպումն է: Այսինքն կայ համշէնահայերու եւ մահմետականացած այլ հայերու խնդիրը: Անոնք ծագումով հայեր են, որոնցմէ շատեր հալածանքներու պատճառով դաւանափոխ եղած են: Կամաց-կամաց, այդ ժողովուրդին մէկ մասին, որոնց մէջ հայ ըլլալու շարժումը չէ մարած, վերադարձի շարժում մը սկսած է: Այսօր մեր համայնքներու, առաջնորդարանի եւ ուրիշ գաղութներու մէջ ալ պետք է կեցուածք մը ճշդել՝ որպէսզի կարողանանք այս ժողովուրդը իր ինքնութեան վերադարձնել:

Սկրտութիւններ եղած են, մեզի նոր սկրտութեանց դիմումներ կան եւ կայ այդ շարժը: Անոնք բոլորը նոյն կարծիքը չունին, սակայն անոնց վերադարձը պետք է տեղի ունենայ քրիստոնէութեան ինքնութեան հարցով: Ճիշդ է որ հայութիւնը կազմակերպուած է Քրիստոնէութենէ աւելի քան 2000 տարիներ առաջ, սակայն վերջին 1700 տարիներուն գերակշռողը քրիստոնէութեան ինքնութիւնն է, որով մենք ձեւաւորուած ենք որպէս ազգ եւ ժողովուրդ: Ես այս կարծիքին չեմ որ՝ «ով որ քրիստոնէայ չէ հայ չէ...»: Գերմանիան ազատ երկիր է եւ ամէն մարդ ազատ է իր ցանկացած հաւատքին հետեւելու կամ չհետեւելու: Բայց եւ այնպէս՝ ես անհաւատ եմ ըսող հայն անգամ կրողն է քրիստոնէական մշակոյթի, եթէ անգամ ինք գիտակից չէ այս իրողութեան: Իբրեւ հոգեւորական բնականաբար կը փափաքիմ, որ իսլամացած հայերու վերադարձը դէպի հայութիւն ըլլայ քրիստոնէութեան վերընդունման ճանապարհով, քանզի կը հաւատամ, որ այդ է ճիշտ եւ ընդունելի ճանապարհը:

**Հարցում.-** Բազմաթիւ կարծիքներ կան Գերմանիոյ հայերու թիւին մասին, նկատի առնելով որ վերջին տարիներուն բազմապատկուած է ան: Ի՞նչ է ձեր կարծիքը այդ մասին:

**Պատասխան.-** Կան բազմաթիւ մօտաւոր թիւեր: Ասկէ 15 տարիներ առաջ երբ Գերմանիա եկայ, կ'ըսուէր թէ 20,000 հայ կայ այստեղ: Անոր վրայ ամէն տարի 4-5 հազար մը աւելցուցինք: Այսօր ոմանք կը խօսին 60 հազար հայերու մասին: Ոչ մէկ յստակ վիճակագրութիւն բնականաբար չունինք, հակառակ որ բազմաթիւ ընտանիքներու հասցէներ կան Առաջնորդարանի տոմարներուն մէջ, սակայն շատ հայեր ոչ մէկ առնչութիւն ունին մեզի թէ հայ գաղութին հետ:

Հայաստանէն ալ հազարաւոր արտագաղթածներ կան: Կը կարծեմ թէ 45-50 հազար է հայութեան թիւը՝ որոնց վրայ պետք է աւելցնել համշէնահայերն ու դաւանափոխները՝ որոնց թիւին մասին ալ բազմաթիւ հակասական տուեալներ կան: Ասոնց սիրտը փխրուն

Է: ՄԷԿ կողմԷ անոնք գիտեն որ մահմետականացուած են, սակայն հայ են, իսկ միւս կողմԷն հայ հանրութիւնը միատեսակ չի վերաբերիր ասոնց հանդէպ: Մերժողական կեցուածք ունեցողներ ալ կան...: Հանդուրժողներ եւ գրկեաց ընդունողներ ալ կան: Անոնց համայնքային ներգրաւումն ալ բաւական դժուար է: Այլազան եւ իրարամերժ մօտեցումներ կան: Ուրախ պիտի ըլլայինք, եթէ մեր եկեղեցին ու պետութիւնն ալ հասարակաց կարծիք ու դիրքորոշում որդեգրէր դաւանափոխ հայերուն հանդէպ:

